

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՎԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏՈՒՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՔԻՒ և ՈՒՔԻՒ :

ՈՒՔԻՒ քաղաքը որ ՈՒահմէտին հայրենիքն է, չեճազ կամ լպառաժ լրաբիա ըսուած գաւառին քաղաքներէն մէկն է, լարմիր ծովին օրուան մը ձամբով հեռու ձորի մը մէջ՝ երկու կողմէն լեռներով պատած : Դորս դին եղած երկիրը անթեր անապատ է . ոչ գետ մը, և ոչ մէկ ջրի առուակ մը կայ որ ան անապատ ձորին մէջ ձամբորդին ծարաւը անցընէ, կամ պղտիկ բոյս մը աճեցընէ : Լայսպիսի տաք ու անթեր երկրին բոլոր ապրուստը դրսէն կուգայ . ալիւրը լագիպտոսէն, բրինծը հնդկաստանէն, խոտեղէնները իջափիէն, և այլն : Հասարակ ժողովրդեան խմածը ջրհորի ջուր է, բայց ծանր ու անհամ . խսկհարուստները մօտ եղած լեռներէն բերել կուտան իրենց խմելքը : Դիտնալու բան մըն ալ աս է՝ որ ՈՒքբէի մէջ խիստ քիչ շուն կը տեսնուի, ինչպէս նաև ուրիշ ձանձրացսւցիչ ձանձեր ու ձախներ . անոնց տեղը շատ մեծ նեղութիւն կուտան մկները՝ որ խիստ շատ ու յանդուգն են :

Լոք քաղքին դիրքը նայելով՝ օդը գէշ պիտի ըլլար, բայց այնպէս չէ . և թէպէտ քաղաքացիքը խոր ծերութեան չեն համնիր, բայց երկարատեհիւանդութիւններու ալ քիչ կը հանդիպին : Ովզորաբար մաղձոտ են բընութք, ու երգի խաղի ձայն հազիւ կը լսուի ՈՒքբէի փողոցներուն մէջ : Տաքգլուխ են ու շուտ կը բարկանան . և կ'ըսեն թէ ասոնք իրենց գերիներուն հետ աւելի խստութեամբ կը վարուին քան թէ ուրիշ ամէն արևելցիք :

ՈՒքբէն պարիսապ չունի . միայն մէկ

բերդ մը ունի բլրի մը վրայ, քանի մը աշտարակներ ալ ձորին մէջ մէկմէկէ հեռու : Պլսաւոր փողոցները շիտակ են, ու մէջը կան քանի մը գեղեցիկ առմաւի տերևներէ շինած գեղեցիկ ու թեթև ծածկոյթներով, որ արեւուն տաքութիւնը կը կոտրեն : Տներուն շատը քարաշէն է՝ իրեք կամ չորս գստիկոնով, ծեփով ու նկարներով զարդարուած : ՈՒքբէի քաղաքցիքը մեծ փոյթ ունին իրենց տունը մաքուր պահելու, որպէս զի կարենան պատրաստ տեղ տալ ուխտաւորներուն . վասն զի իրենց ապրուստը գրեթէ բոլոր ան ուխտաւորներուն տուած վարձքէն ու ընծաներէն է :

ՈՒքբէի ժողովուրդը օրէ օր պակսելու վրայ է : Ի՞աղքին մէկ մասը բոլորովին երեսի վրայ ձգած ու աւերակ է . մնացած տներուն շատն ալ պարապ : Ինսակիչները գողաբարոյ են, անանկ որ Ի՞եապէէն ալ գողութիւն կ'ընեն : Լանայք սովորութիւն մը ունին որ տգեղ անջնջելի կիտուածներով իրենց մորթը կը ծակծըկեն, ակռանին ալ ոսկեգոյն կը ներկեն :

ՈՒքբէի մէջ ամենէն զարմանալի շէնքն է Ի՞եապէն, որ ՈՒահմէտէն շատ ալ առաջ լրաբացիք կը պատուէն կ'ըսեն : Մսիկայ պղտիկ մզկիթմըն է՝ անտաշ քառակուսի կարծր քարերով շինած . բարձրութիւնն է 34 ոտք ու 4 մատնաչափ անգղիական, ու ամէն մէկ կողմը (որովհետեւ քառակուսի է) 29^{էն} ինչուան 38 ոտք երկայնութիւն ունի : Լոն անկեանը մէջ որ ձեացած է հիւսիսային արևելեան ու հարաւային արևելեան կողմերէն, հաստատուած է մէկ լայն սե քար մը՝ յատակէն 42 մատնաչափ վեր, ու բոլոր պատած է մէկ ոտնաչափ հաստութեամբ արծաթի թիթեղով :

Լոք հոչակաւոր սե քարը, որ հաճրէւլէսկա կ'ըսուի, մահմետականք կարծեն թէ յակինթ քար մըն է որ

Գաբրիել հրեշտակը երկնքէն բերեր
ու Աբրահամու տուեր է . կ'ըսեն ալ
թէ առաջ պայծառ է եղեր , ու ետքը
մեղաւոր կնկան մը դպւելովս սեցեր է :

Իսլոր Վեապէն սև դիպակէ ծած-
կոց մը ունի որ Ծահւելէւապէ կ'ը-
սուի , ու ամէն տարի կընորոգուի .
և ասոր լայն ծոպերուն վրայ զուրա-
նին խօսքելոը գրած են : Ամէն տարի
կըխրկուի նաև ոսկեթելքանած նոր
վարագոյր մը՝ դուռը գոցելու համար :

Վեապէին ներսը մէկ սրահ մըն է՝
երկու սիւներու վրայ հաստատուած :
Աս սիւներն ու պատերը ծածկած են
մետաքսէ փառաւոր՝ վարդագոյն ,
ծաղկենկար , արծաթագործ ու ձեր-
մակ ծոպերով զարդարած կերպասով .
և աս կերպասը միշտ () սմանցոց թա-
գաւորին պարզեն է . վասն զի () ս-
մանցոց ամէն թագաւորները երբոր
աթոռը կընստին՝ նոր մը կըխաւրեն
Վեապէին : Քատակը ազնիւ մար-
մարիոն քարե է : Անէկ սիւնէն մէկա-
լը , ու սիւներէն ինչուան պատերը
ծգած են արծաթի ձողեր , և անոնց
մէ կախուած են շատ մը ոսկի կան-
թեղներ՝ մէկմէկու վրայ :

Վեապէին քովը՝ պղնձէ վանդակի
մը մէջ շիրիմ մը կայ սև կերպասով
պատած : Ահամէտականաց ըսածին
նայելով , աս շիրիմը մէկ մեծ քար մըն
է որ Աբրահամաթոռի տեղ գործա-
ծեր է Վեապէն շինելու ատենը . ու
քանի որ շէնքը կըքարձրանար՝ աթո-
ռին քարձրութիւնն ալ կ'աւելնար
կ'ըսեն :


Վեապէին մօտ՝ փառաւոր գմբէ-
թով ծածկած է Օէնկէ ըսոււած ջըր-
հորը : Ահամէտականք կ'ըսեն թէ
աս ան աղքիւրն է որ հրեշտակը հը-
րաշքով բխեցուց Ագարին համար ,
երբոր անիկայ անապատին մէջ մեռ-
նելու վրայ էր ծարաւէն՝ իր Խամայէլ
որդւովը : Աս ջրհորին պահապանը
պատուաւոր մարդ մըն է , որ ուխտա-
ւորներուն ջուր կը խմցընէ անկէ :

Անէքքէի մեծ մզկիթը , որ Անէմի-
տէ շէքք կ'ըսուի , Վեապէին շըլա-

նակը շինած է , և անոր մէջն է Օէն-
կէ ջրհորը : Խակ Վեապէին դրսի
կողմի յատակը բոլոր ազնիւ մարմա-
րիոն քարերով զարդարած է . ասոր
չորս դին եօթը անդամ աղօթքներ
զուրցելով կը դառնան մահմէտական
ուխտաւորները . և հաճի ըլլալու հա-
մար՝ աս բանս ալ հարկաւոր արարո-
ղութիւններէն մէկն է :

Անէտին է քաղաքը գրեթէ 60 մզն
հետու է Լարմիր ծովէն : Լարմիր ծո-
վին արևմտեան ծովեզերքը՝ Անէտի-
նէին դիմացը աւազուտ անապատ է ,
որով աս ծովը կըքաժնուի Անէտի-
նէին դարեթեր ձորէն . Նոյնապէս ալ Անէտի-
նէի արևելեան կողմը ուրիշ աւազուտ
անապատներ կան . այնապէս որ եթէ
Լարմիր ծովը մէջտեղը ըլլար , ան-
հուն անապատի մը մէջ ընկզմած պի-
տի երևնար աս քաղաքը . և սակայն
ասոր երկրին քանի մը տեղուանքը ա-
ւելի պտղաքեր են քան թէ Անէքքէի-
նը : Ը օթապատը չափաւոր մեծու-
թիւն ունի , ու ցած պարիսպով պա-
տած է . բայց քովը բլրի մը վրայ ա-
մուր բերդ մը ունի : Վաղքին շէնքը
գէշէ . տները քարաշէն են ու սովո-
րաբար երկու գստիկոն . գլխաւոր փո-
ղոցները քարայատակ են , բայց մէ-
կանոնք հազիւ երկու իրեք քայլւայ-
նութիւն ունին : Հասարակաց շէն-
քէր քիչ կան . անոնք ալ Անէտիպտոսի
ու () սմանցոց թագաւորներուն շի-
նածներն են : Գուրը ջրհորներէն ու
գետնափոր ջրանցքներէն է , որ բոլոր
քաղաքը կը պտըտին : Բնակչաց թի-
ւը գրեթէ Անէքքէի ժողովրդեան
կէսն է , այսինքն 6000 հոգիի չափ :

Անէտինէի շէնքերուն մէջ ամենէն
երևելին է ան մզկիթը որ շինեց Ա-
պուպէքիր՝ առաջին խալիֆէն , ու
անոր յաջորդները զարդարեցին . ետ-
քը երբոր կայծակէ կործանեցաւ , Ա-
գիպտոսի սուլդանը 1487ին ատեննե-
րը նորոգել տուաւ . ասոր բակին վե-
րի ծայրն է Ահամէտին գերեզմանը :
Ուխտաւորներուն շատը հաճի ըսուե-
լու համար հարկաւոր եղած բաները



ԱԿՐԻՆ :

ԱԿՐԵՔԵՒ ՄԵՋ ԿԱՍՏԱՐԵԼԵՆ ՎԵՐՋԸ, Ա-
ՍՈՐԵՄԸ ԿԱՐԱՎԱՆԻՆ ՀԵՏ ԿՐ ՄԻԱՆԱՆ,
ԿԱՄ ԽՈՒՄԲ ԽՈՒՄԲ ԿՐ ԺՈՂՎՈՒԻՆ, ու
ԻՐԵՆց ՄԱՐԳԱՐԵՒԻՆ ԳԵՐԵՂՄԱՆԸ ՄԵՍ-
ՆԵԼՈւ Կ'ԵՐԾԱՆ : Այ երկու քաղաքը
մէկմէկէ գրեթէ 270 մղնն հեռու են,
ու Ճամբան 10 կամ 12 օր կըքչէ :

Ան մզկիթը, որ ԱԿՐԻՆԵՒ ԱՐԵԼԵԿԱՆ
ծայրը կ'իյնայ, ԱԿՐԵՔԵՒ մզկիթին
հետքիչ մը նմանութիւն ունի, որով
հետեւ քառակուսի մըն է՝ երկու կարգ
բաժնած, չորս կողմը սիւնազարդ
սրահներով. բայց ասոնց մեծութիւ-
նը խիստ քիչ է, ու հազիւ 163 ոտք
երկայնութիւն ու 130 լայնութիւն
ունին : Հինգ աշտարակ կամ մինարէ
ունի ու չորս գուռ . առջի գուռը շատ
գեղեցիկ է՝ մարմարիոնով ու գոյն-
զգոյն աղիւսով զարդարած : Այսմէ-
տին հռչակաւոր գերեղմանին դիրքը՝

հոս դրուած պատկերին մէջ գմբէ-
թովը կ'որոշուի, որ մզկիթէն աւելի
բարձր է :

Այսմէտին մեռած տեղն է իր գե-
րեղմանը, չորս դին երկրթէ վանդակ
քաշած : Կերեղմանը ծածկած է մե-
տաքսէ ծաղկենկար կերպասիվ, որուն
վրայ ոսկեթել բանած գրուածներ
կան . աս ծածկոցը միշտ (Սմանցոց
թագաւորներուն պարգևը կ'ըլլայ՝
երբոր նոր աթուը կընստին . ու ան
ատեն առջինը Առստանդնուպօլիս կը-
խրկուի՝ թագաւորական գերեղման-
ները ծածկելու համար : Այ ծածկո-
ցին տակը սպասաւորներէն զատ մարդ
շկրնար մտնել :

Ավստաւորները վանդակին՝ գուրս
կը կենան, որ 30 ոտք բարձր է, ու
վրան այնչափ խիտ ու շատ դրուած-
ներ կան որ չկընար մէկը ներսը տես-

նել . բայց պատուհաններ ալ ունի ,
որոնց մէջ ուխտաւորները կեցած՝ ի-
րենց աղօթքը կ'ընեն : Ո՞ահմէտին
քովթաղուած եննաև իր երկու բա-
րեկամները , որ իր առաջին խալիֆէ-
ները կամյաջորդներն եղան : Ծիէ որ
ուխտաւոր մը Ո՞իւննի աղանդէն ըլ-
լայ , Ո՞ահմէտին հոգւոյն համար ա-
ղօթք ընելէն ետև՝ կ'աղօթէն նաև եր-
կու խալիֆէներուն հոգւոյն . բայց
թէ որ Ծիի աղանդէն ըլլայ՝ որ չեն
ընդունիր ան խալիֆէները , միայն
Ո՞ահմէտին համար աղօթէլէն վերջը՝
մէկդի կ'երթայ : Երկթէ վանդա-
կէն կախուած էին Ո՞ահապիներուն
կողոպտելէն առաջ՝ հարիւր հատ ոս-
կի կանթեղ , ու միշտ վառած կը մը-
նային . Ո՞ահմէտի գերեզմանին ու
քովի եղած մզկթին պահպանութիւ-
նը յանձնուած է քառասուն ներքինի-
ներու , որոնց ընտրութիւնը թագա-
ւորական դունէն կ'ըլլայ , և կ'ըսուին
Քարաշ կամ աւելածու . ասոնք կար-
գաւ՝ ձեռուընին նիզակով պահպա-
նութիւն կ'ընեն գերեզմանին ու
մզկթին :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎԱՒՔ ԸՆՐԱԿԱՑ

| Հէն երինք չայնի առաջինի մանկանց :

Ո՞եկուսւ յընկերակցացն 'ի զառ
'ի վեր փոքու բլրակին ոչ ինչ կարի 'ի
բացեայ յիւրմէ խրձթէն՝ նստէր վա-
րանական հովիւն Ո՞եշենդակ , և
խաշինք նորա լուիկ շուրջ գային զնո-
վաւ : Ո՞իրա իւր անդութ՝ ի հիւղ անդր
ձգտէր՝ ուստի են զայն օր յոչ կամաց ,
և առ 'ի պէտս ևեթ հօտին , և աչք
իւր խորշէին իմն դառնալ ընդ այն
կողմն հայել . հատանէր անցանէր ըղ-
ձիւքն ընդ անձուկ հովիտն որ անջըր-
պետէր ընդ հիւզն և ընդ բլուրն , և
յահէն ընկրկեալ մնայր . զի հիւան-

գագին եթող յանկողնի զ Օ արմուհի
զամուսինն իւր . “ Եւ տակաւին , ա-
” սէր 'ի տրտմութեան իւրում , տա-
” կաւին ոչ ոք 'ի մանկաւոյն երեւ-
” ցաւ . գուցէ գարձեալ զայրացան
” խիթք անհնարին ցաւոց Օ արմու-
” հեայ , և չկամիցին որդիքն քեցել 'ի
” ցանկալի մօրէն . գուցէ և ինքնին
” առ գութ ինչ չկամիցի տրտմեցու-
” ցանել զիս , և վասն այնորիկ չար-
” ձակիցէ զմանկունսն . . . Ո՞հա ոչ
” բազում ժամք են յորմէ հետէ թողի
” զմայրն և զորդիս 'ի լաց 'ի միասին ,
” և թուիմ յաւուրց բազմաց անջա-
” տեալ հեռացեալ 'ի նոցանէ . . . Յա-
” բուցեալ երթայց տեսից զողջոյն
” նորա . . . այլ ում թողից զհօտն ,
” զի ոչ ոք է աստ յընկերաց իմոց . և
” ընդ իս տանել զիարդ լինիցի , զի
” ինքնին Օ արմուհի թախանձեաց
” զիս և ասէ . երթ գու Ո՞եշենդակ
” իմ , արածել զիսաշինսն , և մի դարձ
” ցիս այսր մինչեւ յիջանել ստուերաց .
” և որ բնակէն յերկինս տեսցէ վասն
” իմ . բայց եթէ կոչ առ յինէն հաս-
” ցէ քեզ . . . Ո՞ոռացան արդեօք
” մանկունք զպատուէրն զոր ետու
” նոցա գաղտ ծանուցանել ինձ . . .
” Ո՞յլ զինչ որ շարժինդ անդանօր 'ի
” հեռաստանէ . միթէ նոքա , որ-
” գեակըն իմ . . . բայց ոչ , ստուերք
” են ծառաստանին . . . Ո՞մահ Ո՞-
” տուած , եթէ երբէք հաճոյ եղէն
” քեզ նուէրք անդրանկաց օգեաց
” զոր մատուցանէի քեզ , եթէ ամո-
” քեցին զունկն քո համբերատար հե-
” ծութիւնք Օ արմուհեայ , և քաղցր
” մաղթանք որդեկաց իմոց , պահեա
” զնա աղաչեմ կենդանի մինչեւ իցեմ
” ես . պահեա մատաղ որդեկաց իմոց
” զմայրն իւրեանց բարի . . . պահեա
” Ո՞ստուած , զօրհնութիւն տան ի-
” մոյ , զառաքինի զաղախին քո . . .
” Եւ ծածկեալ զերեսս իւր ուլե-
” նեաւն ելաց լալիւն մեծ . և իբրև
” անագան ուրեմն զաշան յետին ցօղով
” արտասուաց 'ի վեր յերկինս ուղղէր
” ահա ետես , և ոչ ես պատիրք աշաց ,